

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Ի-Վի Քոնսալթինգ

Երեւան, 07 մարտի, 2013 թ.

Մամուլի հաղորդագրություն

Հայաստանն ըստ «2013թ. Չքոսաշրջության մրցունակության զեկույցի» զքոսաշրջության մրցունակությամբ 79-րդն է 140 երկրների շարքում

Ըստ Չքոսաշրջության մրցունակության համաթվի Հայաստանի դիրքը 11 տեղով բարձրացել է 2011 թվականի հետ համեմատած: Հայաստանը հինգերորդ անգամն է, ինչ ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող Չքոսաշրջության մրցունակության զեկույցում: Չքոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկիրների ցանկը այս տարի գլխավորում են Շվեյցարիան, Գերմանիան և Ավստրիան:

Չքոսաշրջության մրցունակության համաթիվ

Չքոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զքոսաշրջության բնագավառում, բաղկացած է 3 ենթահամաթվերից, որոնք հաշվարկվում են 14 հենասյունների գնահատականների հիման վրա:

Չքոսաշրջության մրցունակության համաթիվ

Ենթահամաթիվ A

Չքոսաշրջության կանոնակարգող դաշտ

- Օրենքներ և կանոնակարգեր
- Շրջակա միջավայրի կայունություն
- Ապահովություն և անվտանգություն
- Սանիտարահիգիենիկ պայմաններ և առողջապահություն
- Չքոսաշրջության գերակայությունը

Ենթահամաթիվ B

Չքոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածքներ

- Օդային տրանսպորտի ենթակառուցվածք
- Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք
- Չքոսաշրջության ենթակառուցվածք
- ՏՀՏ ենթակառուցվածք
- Չքոսաշրջության գնային մրցունակությունը


Ենթահամաթիվ C

Չքոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ

- Մարդկային ռեսուրսներ
- Բնակչության զքոսաշրջության ընկալումը
- Բնական ռեսուրսներ
- Մշակութային ռեսուրսներ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԵՆԹԱՀԱՄԱԹՎԵՐԻ

Չբոսաշրջության կանոնակարգող դաշտ



Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը բարելավվել է 7 տեղով (51-րդ տեղ): Հայաստանում վիճակը բավականին բարվոք է ապահովության և անվտանգության, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանների և առողջապահության առումով, սակայն լրջագույն խնդիր է շրջակա միջավայրի պաշտպանությունը: Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության և կիրառման ցածր մակարդակը (100 և 120-րդ տեղեր), զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի արդյունավետությունը (106-րդ տեղ), շրջակա միջավայրին վերաբերող կոնվենցիաներին մասնակցության սահմանափակությունը (96-րդ տեղ), ոստիկանությանը վստահելիության ցածր աստիճանը (91-րդ տեղ) և օդային հաղորդակցության երկկողմ համաձայնագրերի սահմանափակ քանակը (109-րդ տեղ): Եսկան բարելավում է արձանագրվել պետական քաղաքականության թափանցիկության բարձրացման (53-րդից 16-րդ տեղ), ինչպես նաև վիզաների պահանջների (126-րդ-ից 35-րդ տեղ) ցուցանիշներով:

Չբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք




Հայաստանի դիրքը զբոսաշրջության բիզնես միջավայրի և ենթակառուցվածքի ենթահամաթվի առումով բարելավվել է 12 տեղով (88-րդ տեղ): Դրան Եապես նպաստել է զբոսաշրջության ենթակառուցվածքների գրեթե բոլոր հենասյունների գնահատականների բարելավումը, բացառությամբ զբոսաշրջության բնագավառում գնային մրցունակության

հենասյունից: Մասնավորապես բարելավվել են օդային տրանսպորտի ենթակառուցվածքներ ցուցանիշը (77-ից 69-րդ տեղ) և ճանապարհների վիճակ ցուցանիշը (87-ից 79-րդ տեղ):

Հայաստանի հիմնական մրցակցային թերություններից է շարունակում հանդիսանալ հյուրանոցների տեղերի քանակը, որի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 111-րդ տեղը (թեև զեկույցում օգտագործված վիճակագրությունը վերաբերում է 2006 թ.-ին): 2011 թվականի հետ համեմատ Հայաստանն էապես զիջել է դիրքերը ավիատոմսերի հարկեր և օդանավակայանի վճարներ ցուցանիշով (67-րդից 128-րդ տեղ):

Չբուսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ



Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը բարձրացել է 13 տեղով (94-րդ տեղ): Աշխատաշուկայի ճկունությունը (աշխատակիցների աշխատանքի ընդունման և ազատման դյուրինությունը) շարունակում է բարձր պահել մարդկային ռեսուրսների օգտագործման գծով մրցունակությունը: Որոշ չափով բարելավվել են վերապատրաստման և հետազոտական ծառայությունների հասանելիության (124-րդ տեղից 105-րդ տեղ), ինչպես նաև աշխատակիցների վերապատրաստման մակարդակի ցուցանիշները (116-րդից 96-րդ տեղ):

Բնական ռեսուրսների գծով Հայաստանը դեռևս ցածր դիրքեր է զբաղեցնում, չնայած որոշակի բարելավում է գրանցել բնական միջավայրի որակի ցուցանիշով (127-րդից 118-րդ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ՀԱՄԵՄԱՏԱԾ ԱՊՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Չբոսաշրջության մրցունակության համաթիվ

Երկիրը	Համաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (140 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2011-2013 թթ.
ՌԴ	4.16	63	-4
Վրաստան	4.10	66	7
Ուկրաինա	3.98	76	9
Ադրբեջան	3.97	78	5
Ղազախստան	3.82	88	5
Մոլդովա	3.60	102	-3
Դրոզդստան	3.45	111	-4
Տաջիկստան	3.41	114	4
Հայաստան	3.96	79	11

2013թ.-ին այս երկրների խմբում զբոսաշրջության բնագավառում ամենամրցունակ երկիրը Ռուսաստանն է (63-րդ տեղ), որը թեև զիջել է իր դիրքերը 2011թ. նկատմամբ 4 տեղով: Մրցունակության համաթվով Հայաստանը զիջում է Վրաստանին (66), Ուկրաինային (76) և Ադրբեջանին (78) և գերազանցում է Ղազախստանին (88), Մոլդովային (102), Դրոզդստանին (111) և Տաջիկստանին (114):

Չբոսաշրջության կանոնակարգող դաշտ

Ըստ զբոսաշրջության կանոնակարգող դաշտի ենթահամաթվի առաջատարը Վրաստանն է (30): Տարածաշրջանում Հայաստանը զիջում է միայն Վրաստանին (30) և Ադրբեջանին (46):

Չբոսաշրջության կանոնակարգող դաշտ

Երկիրը	Ենթահամաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (140 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2011-2013 թթ.
Վրաստան	5.18	30	+5
Ադրբեջան	4.94	46	+13
Ուկրաինա	4.73	60	+4
Ղազախստան	4.66	62	+3
Մոլդովա	4.61	65	+3
Տաջիկստան	4.28	90	-2
Ռուսաստան	4.24	92	-19
Դրոզդստան	4.23	93	+2
Հայաստան	4.88	51	+7

Չբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք

Ըստ զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք ենթահամաթվի Հայաստանը բավականին թույլ դիրքեր է զբաղեցնում՝ դիտարկվող երկրներից գերազանցելով միայն Մոլդովային (97), Տաջիկստանին (123) եւ Դրոզդստանին (131): ԱՊՐ երկրների շարքում

առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը (46), Ուկրաինան (71) և Ղազախստանը (79):

Չբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք

Երկիրը	Ենթահամաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (140 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2011-2013 թթ.
Ռուսաստան	4.22	46	+7
Ուկրաինա	3.62	71	+5
Ղազախստան	3.48	79	0
Վրաստան	3.46	80	+9
Ադրբեջան	3.34	87	+14
Մոլդովա	3.16	97	+1
Տաջիկստան	2.69	123	+7
Դրոզդստան	2.61	131	+1
Հայաստան	3.34	88	+12

Չբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ

Ըստ Չբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ ենթահամաթվի առաջատարը Ռուսաստանն է (58)՝ տիրապետելով մշակութային եւ բնական հարուստ ռեսուրսների: Հայաստանը զիջում է միայն Ռուսաստանին (58) և Վրաստանին (91):

Չբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ

Երկիրը	Ենթահամաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (140 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2011-2013 թթ.
Ռուսաստան	4.02	58	-13
Վրաստան	3.67	91	+1
Ադրբեջան	3.63	96	+9
Ուկրաինա	3.59	99	+19
Դրոզդստան	3.51	103	-3
Ղազախստան	3.30	119	+4
Տաջիկստան	3.26	122	+6
Մոլդովա	3.04	133	-4
Հայաստան	3.65	94	+13

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանն զգալիորեն բարելավել է իր դիրքերը զբոսաշրջության մրցունակության բնագավառում: Այսուհանդերձ, առկա են մի քանի կարևոր մարտահրավերներ, որոնք խոչնդոտում են զբոսաշրջության ոլորտում Հայաստանի մրցունակության աճին, այդ թվում՝

- Օդային փոխադրումների գնային մրցունակություն
- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի և պահպանման ցածր մակարդակ
- Չբոսաշրջության առաջմղմանն ուղղված մարքեթինգային ջանքերի ցածր արդյունավետություն
- Թույլ զարգացած հյուրանոցային ենթակառուցվածք

Չբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության գերակա ոլորտներից մեկն է, և վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը էական նշանակություն կունենա ոչ միայն զբոսաշրջության, այլև երկրի ընդհանուր տնտեսական զարգացման համար:

Չբոսաշրջության մրցունակության զեկուլյցի մասին

Չբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկուլյցն առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՅՏՖ): ՅՏՖ-ը երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Չբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Չեկուլյցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz & Company, Deloitte, IATA, IUCN, UNWTO, WTTC, և գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՅՏՖ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Հովսեփ Էմին 123

Երևան-0051 Հեռ. +374 10 21 97 40

info@ev.am,

www.ev.am, www.evconsulting.am